

այն ատենուան դատաստանիս մէջ՝ Մաթիկին տուրքերը գերազանց արժանիքներ էին, քանի որ ինծի համար իմաստը ու անոր փրփուրը կը մնային մէկ. իմացականութիւնն ու յեղափոխութիւնը՝ հանճարին յատկանիշները, մա՛նաւանդ ինծի հիմնովին անծանօթ ընկերային հարցերու, իմաստասիրական դրութիւններու շուրջ Մաթիկին լայն ու արձակ ճախրանքները՝ նախանձելի գեղեցկութիւն: Ու ամէնէն կարեւորը՝ խօսքը, անոր տենդը, առքը, միսերը, արիւնը, հեշտանքը, որոնք բոլորը մէկ կը բռնանային: Ես լսած էի Եղիշէ Դուրեանի քարոզները՝ ինծի խօսքի գերազանց վայելքներ: Դաշն, կանոնաւոր, թաւալուն էին բառերը բանաստեղծ եպիսկոպոսին բերնին, բայց ախուր փաստովը ո՛չ միտք ըլլալու, ոչ ալ կիրք: Մաթիկ արեւելահայ բարբառը կ'արժեւորէր ու կ'աւելնար իմ հիացումիս մէջ իր պարունակութեան ալ փառքովը: Ամէն մէկ նախադասութիւն կամ յուզում կը փոխադրէր ինձմէ ներս կամ մտքիս մէջ գոց հերկ մը կը պատահէր: Ու խօսքը, այս անգամ ընդհանուր, պատգամ էր 1900ի մարդոց համար: Անկէ ասդին կարծես քիչ բան է փոխուած սա հանգամանքներէն:

Մաթիկ Մելիքխանեանց այլապէս կը տպաւորէր, խօսքի շնորհներէն անկախաբար, հարց մը մէկ հարուածով ընդգրկելու, վերլուծելու, կրկին համադրելու ու գործողութեանց հետեւանք մը եղող նորոգելու շատ սահուն տուրքերով, որոնք նպաստը կը վայելէին իր մասնակի կշռականութեամբ մը օժտուած հագագին, ուրկէ բառերը կը ծորէին քաղցր, բայց արու ու ամբողջ, իր շատ զարգացած շունչին, արդիւնք՝ իր թափառական կեանքին լեռնէ լեռ, Վան ու Սասուն, յաճախ երէի մը նման խուճապահար փախուստով, մարմինին ընդհանուր ճղճիմութիւնը լայնօրէն հակակշռող ցուլի կուրծքէն երբ կու գար դուրս: Այդ շունչին երկարութիւնը, համատարրութիւնը, ընդդիմահար բանի մը նման քեզի դպիրը թերեւս կը խոստանային ապագայ մեծ վարիչը, meneur, բառին ետին պզտիկցած մեր շատ գիտցող վարժապետ-